

գուցանել է նմանէն զիրան արբաճամու: Քան-
զի թէ սուտ խաւսիցիմք զնմանէն թէ չգիտէր
զարդարութիւնն արբաճամու, ոչ հատանեմք
ինչ ի նմանէն, և ոչ փնաս առնել կարեմք. բայց
եթէ զարդարն խաւսիցիմք, վկայակիցք եղեաք
ճշմարտութեանն. իսկ եթէ գիտէր սառա և մէք
զրպարակիցեմք զնա որպէս թէ ոչ գիտէր, փնա-
սիմք:

2. Նշանակելի է. թէ ուր տաճարն շինեցաւ
անդ պատարագէր և սահակ. թերեւ և ճշմար-
տագոյն եւս իցէ, ուր որդին աստուծոյ է խաչ
ելանէր. և քանզի ոչ անխայեաց արբաճամ է
միածինն իւր, աստուած փոխարէն տայ Աբրա-
համու՝ և նովաւ ազգաց մարդկան, զի յորդին
իւր ոչ խնայեաց:

litatem de hoc ipsam Abrahamum celasse fa-
teamur. Si enim falso dixerimus iustitiam
Abrahami eam ignorasse, nihil detrahimus
neque offendere possumus. At si iustam prae-
dicemus, testes iam efficimur veritatis. Quod,
si id noverit Sara, eamque nos calumniemur
tamquam si non noverit, nos ipsi laedimus.

2. Notandum est quod ubi templum aedifi-
catum est, ibi et Isaac immolatus fuerat, vel,
forsan verius, ubi Filius Dei crucifixus est.
Cum, enim, non pepercisset Abraham unigenito
suo, Deus illud tribuit Abrahamo et per eum
humano generi munus, ut Filio suo non par-
ceret.

Frattanto, per iniziare la critica sul trattato del pseudo-Cirillo, pur limitandoci in quest'occasione al suo commentario sulla Genesi, che è il più ragguardevole, lo studioso potrà distinguere: I. Una introduzione sul modo di tradurre la Bibbia, ove sono riprodotti i principî della scuola di Luciano. II. Una serie sparsa di scoli ricchi di lezioni esaplatari. III. Scolii d'indirizzo storico e tipologico. IV. Une serie di *quaestiones et responsiones*¹⁵ che mi sembrano risalire spesso a fonte *midrašica*: al quale proposito devo notare che non raramente presso il pseudo-Cirillo s'incontrano dei tratti introdotti colle parole *Hebraeus quidam ait...*: frase questa messa già in evidenza dai critici nello studio di Procopio.

Il tempo che mi è concesso, non mi permette per ora di passare ad altre identificazioni: ricordo solo ciò che ho notato altrove, che, cioè, se da una parte è certo che una grande quantità di passi del pseudo-Cirillo deriva dall'Emeseno, tuttavia una critica più severa esige senza dubbio che il lavoro d'indagine sulle fonti sia esteso a tutto il lavoro, tenendo conto sopra tutto dei codici greci della così detta catena di Niceforo e di quelli del commentario di Procopio.

15. Da questo punto di vista l'opera del pseudo-Cirillo potrà essere compresa nella letteratura patristica delle *quaestiones et responsiones*. Vedi il recente studio di G. Bardy: *La littérature patristique des « Quaestiones et responsiones » sur l'Écriture Sainte*, *Revue Biblique* XLI, n. 2, (1932), 210-236; n. 3, 341-369; n. 4, 515-538; XLII, n. 1 (1933), 14-30; n. 2, 211-229; n. 3, 328-352.

PROF. ALMO ZANOLLI

Ս. ԳՐՈՑ ՀԱՅԿ. ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՍԻԱԼՆԵՐՈՒՆ ԵՒ ԱՌԱԽԵԼՈՒԹԵԱՆՑ ՆՄՈՅՇ ՄԸ



ԳՐՈՑ զիտութեամբ զբաղողնե-
րուն ծանօթ է թէ ինչպէս Աստուա-
ծաշունչի բոլոր նախնի թարգմանու-
թիւնները իրենց յատուկ սխալներն ու
սայթաքումներն ունեցեր են, այսպէս և
մանաւանդ աւելի իրաւամբ — բանի որ
երկրորդ ձեռքի թարգմանութիւն մ'է — Հայ-
կականն ալ ունի իր ուրոյն սխալները,
որոնցմէ սակայն մեծ մասը — պէտք է
ըսենք անմիջապէս — ժառանգական սխալ-
ներ են, այսինքն ուրիշ թարգմանութեանց
անյաղթելի սխալներուն ժառանգութիւն-
ները:

Ինչպէս բոլոր թարգմանութեանց, այս-
պէս և Հայկականին մէջ ոչ նուազ դեր
խաղացեր են նաեւ սխալագիր ընթերցողներ,
և երբեմն ալ սխալ ընթերցումներ:

Սխալներէն զատ յայտնի են գիտուն-
ներուն նաեւ մեր Հայ Աստուածաշունչի
առաւելութիւնները որով — հակառակ եր-
կրորդ թարգմանութիւն մ'ըլլալուն — երբեմն
ոչ միայն կրնայ յաւաստակցել այլ և սրբա-
գրեղ իր բնագիր ծառայող՝ Ասորական ու
Եթովպական թարգմանութիւնները:

Այս սխալներն ու առաւելութիւնները
տեսնելու համար հարկ չկայ ամէն անգամ
երկար քննութեանց ու տքնութեանց — որով
մեր թարգմանչաց աննման աշխատու-
թեանց ճաշակը սակաւ և բացառիկ ան-
ձանց միայն վերապահուած պիտի ըլլար —
այլ շատ անգամ կը բաւէ նոյն իսկ լոկ
բառի մը միայն ուշադիր քննութիւնը, այն
է Ս. Գրոց զանազան խաւերուն մէջ այդ
բառին կրածն և ունեցած պատմութիւնը:

Ահա այս նպատակաւ, իբր նմոյշ՝ բառ
մը միայն կ'առնեմ քննելու. բառ մը ինք-
նին աննշան՝ րրեկին, բայց որ իր վրայ

կը կրէ, իբր անջնջելի վաւերացողութ մը,
մեր թարգմանչաց զրեթէ բոլոր աշխա-
տութեանց հետքերը, անոնց սխալներն ու
սխալներուն արդարացի պատճառները, ա-
ռաւելութիւնները և ուղիղն ու ճշգրիտը
գտնելու մեծ ջանքերը:

*
* *

Թրեկի բառը Հին Կտակարանի Եբրա-
յեցերէն բնագրին մէջ երկու անգամ կը յի-
շատակուի. Բ. Թագաւորութեանց (Ե. 24)
և ասոր զուգընթաց Մնացորդաց (Ժ. 15)
մէջ: Ասոնց համապատասխան թէ՛ Եթով-
պական և թէ՛ բոլոր նախնի թարգմա-
նութիւնները, որոնց մէջ և Հայկականը՝
բոլորովին տարբեր բառեր կը դնեն: Եթ-
ովպական թարգմանութեան մէջ րոպ բա-
ռին մի միայն Ա. Մակարայեցւոց (2. 34)
մէջ կը հանդիպինք՝ որուն տեղ Հայ թարգ-
մանչները դարձեալ տարբեր բառ մը գոր-
ծածեր են: Հայ թարգմանութիւնն ալ իր
կարգին ունի ուրիշ տեղ մը (Ամովս, Է. 14)
րոպ բառը որուն հանդէպ Եբրայեցերէն
բնագիրը տարբեր բառ կը դնէ:

Այսպէս ահա հարեւանցի ակնարկ մը
տալով Հին Կտակարանին թարգմանու-
թեանց, ուրիշ բան չենք տեսներ բայց
եթէ միշտ տարածայնութիւն մը րրեկի
բառին շուրջ, մանաւանդ Հայերէնին մէջ՝
ուր տխուր, լքուցիչ և անյաշող թարգ-
մանութիւն մը միայն կը նշմարուի կար-
ծես. սակայն եթէ վերոյիշեալ պարբերու-
թիւնները առանձին քննենք, բոլորովին
հակառակ և շատ զոհացուցիչ եզրակա-
ցութեան մը պիտի յանգինք: Տեսնենք
զանոնք մի առ մի:

Բ. Թագաւորութեանց (Ե. 23) և ասոր համապատասխան Ա. Մնացորդաց (ԺԴ. 14) մէջ կը պատմուի թէ այլազգիները հսկաներու հովիտը խուժած ըլլալով, Դաւիթ մարգարէն Աստուծոյ խորհուրդ կը հարցնէ. Անոնց վրայ յարձակիմ թէ ոչ: Պատասխան կ'ընդունի՝ ուղղակի ճակատէն չյարձակիլ, այլ շրջան մ'ընել և զանոնք կողմնակի բռնել: Պատգամը կ'ըսէր. «Երբոր լսես շշուկը մէկու մը՝ որ կը քալէ Ծ'ԱՅՅ = պրքայիմներու զագաթին վրայ, դու պիտի յարձակիս պատերազմի»:

Արդ այս Պրքայիմ բառը Ասորին և Արարը «Չայն ողորց» թարգմանած են Ա. Մնացորդաց (ԺԴ. 14) մէջ, իսկ Բ. Թագաւորութեանց (Ե. 23) մէջ իբր յատուկ անուն «ի լեւան Պոքիմ»: Քաղաքացիները երկու տեղն ալ անորոշ իմաստով մը «ի սահմանաց ծառաց» դրեր է: Վուկաթան երկուքին մէջն եւս «Տաւնի» (= Pyrus), և վերջապէս Եթովպացիները Ա. Մնացորդաց մէջ «Տաւնի» (= ἄπλον) և Բ. Թագաւորութեանց մէջ «Լաւօն» (= κλαυθμῶνες) թարգմաներ են:

Պրքայիմ բառին այսքան տարբեր իմաստներ (ծառ, ողոր, տանձի, լեւան Պոքիմ) առնելը արդէն ինքնին յայտնի նշան մ'է թէ բոլոր թարգմանիչները անելի մը մատնուած են Երրայական այդ բառին շուրջ. և զայն զանազան կերպով կարգաւոր, բնականաբար իրարմէ տարբեր և երբեմն հակասական իմաստներով թարգմանած են. այդ սխալ ընթերցման մէկ նշանը կը տեսնուի Եթովպացի թարգմանութեան մէջ (Բ. Թագաւորութեանց, Ե. 23) ուր անտարակոյս, Երբ. Պրքայիմ—ը «Պերի» կարգացեր են, որ յիշուի ողոր, լաւօն կը նշանակէ: Վերջապէս այսչափ թարգմանութեանց մէջ և ոչ մին յաջողած է Պրքայիմ բառին ստոյգ իմաստը գտնել, որ ըստ բարունեաց և այժմեան լեզուագէտներուն սեռ թրեկի կը նշանակէ:

Շատ բնական է թէ այսպիսի պարագաներու մէջ մեր Հայ թարգմանիչները որ թարգմանութեան ալ դիմէին՝ անպայման պիտի սխալէին, ինչպէս ստուգիւ

առթիւս սխալած՝ կամ լաւ եւս ժառանգած եւ Եթովպացի սխալը, թարգմանելով ճիշտ Յոյնին պէս Բ. Թագաւորութեանց մէջ (Ե. 24) «և եկեսցես... մօտ ի Լաւօն... անտառին Լաւօնից»: Իսկ Մնացորդաց մէջ (ԺԴ. 15) «Թողցես զնոսա մերձ ի տաւնիս... ի լսել քո զձայն շարժման ծայրից տաւնեաց...»:

Հետեւաբար կ'ըսենք թէ Բ. Թագաւորութեանց (Ե. 24) և ասոր համապատասխան Ա. Մնացորդաց (ԺԴ. 14) մէջ «Լաւօն» և «Տաւնի» գրութիւնները ոչ թէ մեր նախնեաց սխալները՝ այլ ոչոքի թարգմանաբեւեռաց սեյադրի սխալներուն ծանոթորակներն են:

Այսպէս հասկնալու է մեր Հայ թարգմանութեան ուրիշ շատ մը սխալներու մասին:

*
* *

Ա. Մակարայեցւոց (Չ. 34) Յոյն բնագիրը կ'ըսէ. «Και τοὺς ἐλέφασιν ἐδείξαν αἵμα σταφυλῆς καὶ μύρων τοῦ παραστῆσαι αὐτοὺς εἰς τὸν πόλεμον» որ բառ առ բառ կը նշանակէ «և փրկերուն ցոյց տուին արիւն խաղողի և ԹՈՒԹԵՐՈՒ՝ զրգռելու համար զանոնք պատերազմի»: Վուկաթան եւս ճիշտ նոյն ոճով կ'արտայայտուի ըսելով. «Et elephantis ostenderunt sanguinem uvae et MORI ad acuedos eos in praelium»: Մինչ մեր Հայ թարգմանիչը կ'ըսէ «Կազմեցին պատրաստեցին զփրկսն, ճաշակեցուցին յարիւն խաղողոյ ի ՋՄՈՒՌՍ և ի գինիս». ուր, թողլով ուրիշ տարբերութիւնները որոնք գուցէ ներքին համարուին Մակարայեցւոց հայերէնին պէս ազատ թարգմանութեան մը մէջ, սակայն տարակոյս չի վերցնել թէ հոս Յուն. «μύρων»-ին (ուղղ. μύρον = թութ) հանդէպ «Չմառս» ղնելը յայտնի սխալ մ'է. ինչ որ որոշ կը տեսնուի ոչ միայն Յոյն բնագրէն այլ և ուրիշ Հայ հեղինակներէ: Յակոբ Չահկեցիին Մակարայեցւոց նոյն պարբերութիւնը այսպէս կը թարգմանէ. «Յուցեալ եղեւ արիւն



Հայկական Գրչագրեր

Մատենադարան Ա. Ղազարու

ՍՈՂՈՄՈՆ ԱՐՔԱՅ

42. — Աստուածաշունչ Պարսկաստանի. Թ. 623, ամ գրչ. 1648

SALOMON

Bible de la Perse, N. 623, an 1648

խաղողոյ և ՄՈՐԻՈՅ փղացն՝ առ ի յորդորել զնոսա ի պատերազմ» (Գիրք Առաքին.)։ հոս մոր կամ մորի՝ պտուղն է մորենիի որ զրեթէ միշտ իբր վայրի թթեւնի նկատուած է։ Միայն Սպարանեցիին աւելի լաւ եւս բացատրելով վերոյիշեալ պարբերութիւնը՝ կ'ըսէ. «Փիղըն տեսանելով զարիւն, նաեւ զարիւն խաղողոյ, և կամ ՍԵԱԻ ԹԹՈՅ՝ քաջաւերէին ի պատերազմ»։

Ինչ բանէ առաջ եկած է ուրեմն այս սխալ «Զմուռ» բառը Հայկական թարգմանութեան մէջ, փոխանակ յունարէն «μύρον» բառին։

Հայ թարգմանիչը գտնուած պէտք է որ ըլլայ սխալ զրչութեան մը առջեւ ուր փոխանակ «μύρον»-ի՝ գրուած էր անշուշտ «μύρρα» (ուղղ. μύρρα) որ ստուգիւ Զմուռ կը նշանակէ¹։

Ուրեմն հոս ալ բառը մեզի կը պատմէ թէ Հայ թարգմանիչները սխալ գրչագրի մը առջեւ գտնուելով, իր տեղը Զմուռ բառը դրած են։

*
* *

Գ. Թագաւորութեանց (Ժ. 27) մէջ երբայցեղէն բնագիրը կ'ըսէ. «Եւ ետ արքայ զարծաթ յերուսաղէմ իբրեւ զքարինս և զմայրիս ետ իբրեւ ԾԻՔՄԻՍ՝ ճիւղ որ ի դաշտի բազմութեամբ»։ Այս ճիւղիմ որ և ճիւղմոր (եզ. ճիւղման) բառը կը գործածուի նաեւ Ա. Մնացորդաց (Իէ. 28), Բ. Մնացորդաց (Ա. 15, Թ. 27),

Եսայիայ (Թ. 9), Ամովսայ (Ի. 14) և Սաղմոսաց (ԾԲ.) երբայական բնագրին մէջ. և տարակոյս չի վերցնել թէ մուրաբղեի (որ և ժանտաթուղ) կը նշանակէ, ինչպէս յայտնի կը տեսնուի նաեւ Արամեղէն Շիրմա և Ասորերէն Շեքո բառերէն, որոնց նոյնպէս մոլաթղեի կը նշանակեն։ Այս ճիւղիմ բառին հանդէպ Ասորական թարգմանութիւնը միայն երկու տեղ՝ (Բ. Թագ. Ժ. 27 և Ես. Թ. 10) «վայրի քղեկիներ» ունի. միւս հինգ համարներուն մէջ՝ երկու անգամ (Ամովսայ և Սաղմոսաց մէջ) «բուլ» և երկու անգամ ալ (Բ. Մնաց. Ա. 15 և Թ. 27) «ԱԻԱԶ»։ Իսկ Ա. Մնացորդաց Իէ. գլուխ ամբողջութեամբ կը պակսի Ասորական թարգմանութեան մէջ։

Իսկ Եօթանասնից թարգմանութիւնը բոլոր վերոյիշեալ պարբերութեանց մէջ միշտ ՍΥΧΑΜΥՈՅ կամ ՍΥΧΑΜΥՈՆ կը գնէ որ թէ՛ այժմեան բաղիրքներու՝ և թէ՛ նախնի նշանաւոր հեղինակներու համեմատ՝ քրեկի կամ բուլ կը նշանակէ։ Ս. Ղուկաս (ԺԷ. 6) եւս բաց ի այս ՍΥΧΑΜΥՈՅ բառով քրեկի իմանալէ՝ նոյն իսկ զայն յայտնի կերպով կը զատէ նմանաձայն բայց տարբեր նշանակութիւն ունեցող «սυχամորէ» բառէն. և ամէն ազգի նախնի թարգմանիչներ համաձայնօրէն առաջինը (սυχամուս) քրեկի կը թարգմանեն, իսկ երկրորդը (սυχամորէ)՝ ժանտաւր՝ որ է մուրաբղեի։

Ուստի քանի որ երբայցեղէն ճիւղիմ կամ ճիւղմոր մուրաբղեի կը նշանակէ և անոր հանդէպ գրուած Յունարէն ՍΥΧΑ-

ΜΥՈՅ կամ ΣΥΧΑΜΥՈՆ քրեկի, բուլ, կը հետեւի որ Եօթանասունը սխալած ըլլան Ս. Գրոց վերոյիշեալ բոլոր պարբերութեանց մէջ։ Գրեթէ այս հետեւանքը կը հանեն Ս. Գրոց մեկնիչներէն ոմանք. և ուղղակի չըսելու համար «Սխալած են» միայն զարմանքի ազնիւ բացատրութիւններով կը փակեն ինդիրը, առանց կարեւոր տալու գոհացուցիչ մեկնութիւն մը։ Ահաւասիկ անոնցմէ միոյն՝ E. Lavesque-ի խօսքերը «... Չարմաքով կը հաշտուենք որ Եօթանասունը երբայ. ճիւղիմ կամ ճիւղմորը թարգմանելու համար ՍΥΧΑΜΥՈՅ [քրեկի], ΣΥΧΑΜΥՈՆ բառը կը գործածեն... վասն զի ճիւղիմ ստուգապէս մուրաբղեի է»։

Արդ կը հարցնենք. ստուգիւ սխալած են Եօթանասունը վերոյիշեալ պարբերութեանց մէջ։ Այս հարցման պատասխանը ոչ մէկը այնքան հեղինակութեամբ պիտի կարենայ տալ որքան մեր Հայ թարգմանիչները, քանի որ անոնք ուղղակի Եօթանասնից վրայէն² և ամէն թարգմանիչներէ աւելի Եօթանասնից ամէն մի բառին ուժն և իմաստը սուսնասիրելէն և ըմբռնելէն վերջն է որ արդիւնաբերած են այդ մեր Հայերէն Աստուածաշունչը։

Այդ մեր Հայերը ուրեմն, վերոյիշեալ յունարէն ՍΥΧΑΜΥՈՅ բառը, ԹԹԵՆԻ թարգմանած են Նոր կտակարանի մէջ, բայց Հին կտակարանին մէջ միշտ ՄՈՒԱԹԶԵՆԻ՝ որով կերպով մը ըսել կ'ուզեն թէ այդ ՍΥΧΑΜΥՈՅ բառը երկու իմաստ ունի Թրե-

կի և Մուրաբղեի։ Եւ ստուգիւ եթէ լաւ քննենք Յոյն մատենագիրները, պիտի տեսնենք որ անոնց մէջ չեն պակսիր հեղինակներ որ ՍΥΧΑΜΥՈՅ բառը մոլաթղեի իմաստով եւս գործածած ըլլան. այսպէս Ստրաբոն իր գրքին մէջ (XVIII. 3), Թէոփրաստ «Historia plantarum»-ին՝ և մանաւանդ Թէոփր Սիկիլիացին (I. 34) որ ճիշտ մեր Հայ թարգմանիչներու նման երկու տեսակ ՍΥΧΑΜΥՈՅ կը գնէ. Մին՝ որ բուլ կու տայ [= թթեի], միւսը՝ որուն պտուղները բուլի նման են [մոլաթղեի]։

Ուրեմն միայն Հայ թարգմանչաց հեղինակութեան վրայ հիմնուած՝ կրնանք ըսել թէ Եօթանասունը չեն սխալած վերոյիշեալ պարբերութեանց մէջ երբայցեղէն ճիւղիմ-ը Յուն. ՍΥΧΑΜΥՈՅ թարգմանելով։

Ահա այսպէս Աստուածաշունչի Հայ թարգմանութիւնը երբեմն կը լուսարանէ իր բնագիր ծառայող թարգմանութիւնը, ինչպէս հոս Եօթանասնիցը, և երբեմն ալ կը սրբագրէ զանոնք, ինչպէս առթիւս Ասորի թարգմանութիւնը՝ որ փոխանակ մուրաբղեի բառին՝ երկու տեղ «Առաջ» կը գնէ երբայցեղէն ճիւղիմ բառին հանդէպ։

*
* *

Ահա թէ չնչին և պատահամբ ձեռք ինկած բառի մը քննութիւնը մեզի ինչքն կը պատմէ. կաթիլ մը անհուն ովկիանոս-

1. Չարմաքով է որ Vigouroux-ի Ս. Գրոց ընդարձակ բառարանին մէջ «Murier» բառին ներքեւ բնաւ չի յիշատակուիր Ս. Գրոց այս μύρον բառը. մանաւանդ թէ հոն՝ Ա. Մակարայեցու Զ. 34 համարին մէջ, μύρον-ի տեղ ՍΥΧΑΜΥՈՅ կ'ենթադրուի. ահա այդ բառարանին մէջ E. Levesque-ի խօսքերը. «Le nom de la mûre, συχαμυῖα se rencontre certainement une fois dans l'Ancien Test. Il est dit dans I. Machab. VI 34...»։ մինչդեռ ինծի ծանօթ Ս. Գրոց բոլոր հեղինակաւոր հրատարակութիւններ առանց բացառութեան միշտ «μύρον» կը գնեն Մակար. վերոյիշ-

շեալ տեղոյն մէջ. այդ հրատարակութիւններն են՝ Ա. Sacra Biblia. Hebr. Graec. Lat. հրատ. 1599. — Բ. Bibl. Polyglotta. Brianus Waltonus-ի հրատ. Լոնտոն 1557. — Գ. Vetus Test. Graec. e codice Ms. Alexandr. (որ Լոնտոնի բրիտանական թանգարանի նմանատիպն է) հրատ. Լոնտոն 1819. — Դ. Vetus Test. Graec. Lat. J. M. Jager. հրատ. բարիդ 1855. Եւս. Արդէն մեր թարգմանիչներուն այդ ինդրաբուր բառը «Զմուռ» թարգմանելն ալ μύρον-ը μύρρα-ն փոխելը կ'ենթադրէ և ոչ թէ ՍΥΧΑΜΥՈՅ։

1. «... On constate avec étonnement que les Septantes pour traduire l'hébreu šigmim ou šigmat, emploient le mot συχαμυῖος, συχαμυῖον... car šigmim est certainement le sycomore» (Vigouroux; Dict. Bible Գ. 1344)։

2. Հայկական թարգմանութեան մէջ, այս պարբերութեանց՝ ասորական ազգեցութիւն չկրելը անկէ յայտնի է որ, ինչպէս տեսանք, Ասորի երբեմն «Առաջ» կը գնէ երբայցեղէն ճիւղիմ-ին հանդէպ. մինչ մեր թարգմանութեան վերոյիշեալ պարբերութեանց մէջ այդպիսի բառ զոյգութիւն չունի։

3. Մի միայն Եսայիայ (Թ. 10) մէջն է որ ՍΥΧΑΜΥՈՅ բառին հանդէպ ստուգապէս տարբեր բառ՝ «մայ-

րի» կը տեսնենք Հայկ. թարգմանութեան մէջ. մինչ Ամովսայ և Սաղմոսին մէջինը միայն առերեւոյր տարբերութիւն մ'է. Ստուգիւ Ամովսայ (Ի. 14) մէջ պարզապէս Հայ ընդօրինակողին անուշաղբութեան հետեւանք մ'է զորին տեղ ք տալը, մարգարէին «Հովիւ էի և բուր քաղէի» խօսքին մէջ բուր բառը պէտք է բուլ (մոլաթղեի պտուղը) կարգաւ, իսկ Սաղմոսին (ՀԷ. 47) «Եհար կարկտիւ զայգիս նոցա և զքղեկս նոցա» խօսքին՝ քղեկս բառը պէտք է կարգաւ կամ եղեմամբ խօսքին՝ քղեկս բառը պէտք է կարգաւ կամ իմանալ զմուրաբղեիս։ — Լատին թարգմանութիւնը յայտնապէս սխալած է սաղմոսին այս բառին տեղ «moros» գրքեկս գնելով։

սին մէջ: Եւ ստուգիւ այդ գերագոյնը զըր- իրենց բնական ոճով և այսպէս առիթ
քերու, բաց ի շտեմարանն ըլլալէ Աս- կ'ընծայեն մեզի ուսումնասիրութեան՝ ըլ-
տուծոյ խօսքին առ մարդիկ, է միանգա- լայ իրենց հնութեան, ըլլայ ուրիշ ո՛ր և է
մայն բով մը մարդկային կենցաղի զանա- տէսակէտով, ինչպէս է մեզի համար հոս
զան երեւոյթներուն, որոնց հետ ամբողջ յատկապէս լեզուականը՝ Աստուածաշունչի
բնութիւնը ու տարերքն է որ կու գան հայացման աղերսով:

Հ. Ս. ՖԵՐԱՆՅԱՆ

ԸՍՏ ԹԱԼԱՄՈՒՏԻ



ԲԲ Աստուած մարդոս հողից ստեղծեց,

Հաւաքեց հողը երկրի չորս կողմից.

Առաւ հարաւից, հիւսիսից առաւ,

Եւ արեւելքից եւ արեւմուտքից

Որպէս զի մարդը, ոչոք որ դեզերէ.

Ամեն տեղ իրեն զգայ իր երկրուն,

Եւ երբ որ յոգնի, եւ մահը բերէ.

Նրա անյագորդ տենչանքներուն վերջ,

Ամենուր լըսէ ձայնը մայրական. —

« Արի, որդեակ իմ, հանգչիր գրկիս մէջ »:

Ա. Ի. ԲՍԱՀԱԿԵԱՆ



ԱՅԼԱԿԵՐՈՒԹԻՒՆ



ՍԱՆԻՍԱԻՈՐ ոչ տրիսագին քայլերով
Կը բարձրանար Թարորական լեռն Յիւտա.
Հագիւ երեք աշակերտներն երկիւղով
Կը դիտէին այդ հեռաւոր մեզն ոչ յոյս:

Եւ նա կ'երէր արշարոյսին յանդիման,
Կը խաւարէր աշխարհն անոր ետեւէն.
Խոյս կու տային հորիզոններն անասնման
Ու կը տիրէր ամայութիւնն համօրէն:

Մերկ էր Տաճարն իր փառքերէն հոգեւոր
Եւ Սինայի ամպն էր առանց Աստուծոյ,
Որովհետեւ իսրայէլէն կամակոր
Մեկնեցաւ Տէրն իր Հօրը հետ խօսելու:

Կ'երբար Յիւտա ոչ կ'արտասուէր որ մարդիկ
Զինքն ստեղին հըրաշքներէն ձանձրացած.
Որ պաշտելով տարփանքն ոսկի գեղեցիկ
Հաւածեցին զինքը լեռնէ լեռ քաղցած:

Մինչ ինքն անոնց ներողամիտ գրթութեամբ
Թոյլ կու տար միշտ որ հըպէին պիղծ ձեռքով.
Երբ կը խօսէր մեղաւորին քաղցրութեամբ,
Աստուածոշարին իր քանդեցին կասկածով:

Կ'երէր հիմա ձանքաներէն արիւնտ
Ոչոք բիշրաւոր ըսպանեցին մարգարէ.
Ոչոք ոչ երբեք տապանակի յոյսն աղօտ
Ճառագայթեց ոչրախոշքեան մ'առաւօտ:

Կը շրջային ոտքերուն տակը Փրկչին
Գորշ օձերու խաւազաններ լըպրծուն,
Ու կը բախէր բախառական խեղ քամին
Իր սուրբ դէմքին և սրտին խոնջ հեքքերուն: